Ջերմիկ Անկյուն Մանկատան Հաշմադամ Սաների Համար

Նպատակ

Ստեղծել հարմարավետ և հարմարեցված պայմաններ հաշմանդամություն ունեցող չափահաս մանկատան սաների համար

Գործողություններ

Վերանորոգել և կահավորել Արարատի մարզում գտնվող **«Ջերմիկ Անկյուն»** խմբային տանը կից տարածքը, որը ծառայում է որպես զբաղվածության ու թերապիայի տնակ կենտրոնի շահառուների համար:

Ծրագրի նկարագրություն

«Ջերմիկ Անկյուն» հիմնադրամը ստեղծվել է 2006 թվականին, որի առաքելությունն է ստեղծել մշտական կացարաններ հատուկ կարիքներ ունեցող այն միայնակ երիտասարդների համար, ովքեր չափահաս դառնալուց հետո պետք է լքեն մանկատները, սակայն ինքնուրույն ապրել չեն կարող:

Թե՛ Հայաստանում, թե՛ ամբողջ աշխարհում հատուկ կարիքներ ունեցող մարդիկ իրականում առավել խոցելի են, այն դեպքում, որ նրանք ունեն հատուկ խնամքի ու վերաբերմունքի կարիք, իսկ հատուկ կարիքներով մանկատան սաների պարագայում խնդիրը շատ ավելի խորն է և համակարգային: «Ջերմիկ Անկյուն» հիմնադրամը, արձագանքելով այս խնդրին, 2006 թ-ին ստեղծեց առաջին խմբային տունը Երևանում և տարիների ընթացքում զարգացնելով այն որպես այլընտրանքային մոդել, ստեղծեց ևս երկու տուն Կոտայքի և Արարատի մարզերում:

«Ջերմիկ Անկյուն»-ն իրական տուն է դարձել ավելի քան 29 շահառուների համար, ովքեր ապրում են այդ տներում, ստանում բազմաթիվ ծառայություններ, անցնում տարատեսակ թերապիաներ՝ հիմք ընդունելով նրանց զբաղվածությունը: Այլ կերպ ասած ապրում են հասարակությունում որպես լիիրավ անդամ՝ առաջ բերելով իրենց իրավունքները:

Չնայած համավարակային խառնաշփոթին՝ այս տարի հիմնադրամի կողմից Արարատի մարզում բացվեց երրորդ խմբային տունը, որն արդեն իսկ տուն է դարձել յոթ շահառուների համար: Սակայն տունը ուներ նաև կից տարածք, որը նախատեսվում էր դարձնել զբաղվածության և թերապիայի տնակ, որի համար միջոցներ հայթհայթելու խնդիր կար:

Նման հրաշալի կազմակերպությունն ու նախաձեռնությունը չէր կարող անտարբեր թողնել «Այո»-ի թիմին: Մենք առանց երկմտելու որոշեցինք աջակցել «Ջերմիկ Անկյան»-ը, էլ ավելի ջերմացնել իրենց կացարանը և վերակենդանացնել տանը կից զբաղվածության և թերապիայի տնակը:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՀ ԴՐԱՄ
Միջսենյակային դուռ	3	240 000
Հատակի սալիկ	51 ք/մ	306 000
Էմուլսիա	3	3 000
Լատեքս (25 կգ)	3	45 000
Սալիկի սոսինձ	12 պարկ	48 000
Փրփուր	4	7 200
Պահարան՝ ավազաթերապիայի պարագաների համար	1	100 000
Ավազաթերապիայի աթոռ	2	50 000
Արտթերապիայի սենյակի մեծ սեղան	1	250 000
Արտթերապիայի սենյակի աթոռ	20	200 000
Պահարան՝ արտթերապիայի պարագաների համար	2	400 000
Խոհանոցի կահույք	3 ք/մ	150 000
Գազի կաթսա	1	300 000

Փոխարժեքը 2020-ի Հուլիսի 17-ի դրությամբ՝
1 ԱՄՆ դոլար = 482.24

ԸՆԴՀԱՆՈՒՐ **֏2 099 200**